Grant Thornton

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

www.grantthornton.am

«Հայբիզնեսբանկ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետիրոջը և խորհրդին.

Ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են «Հայբիզնեսբանկ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Բանկ») ամփոփ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, այդ տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները՝ քաղված Բանկի 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից: Մենք այդ հաշվետվությունների վերաբերյալ 2014թ. ապրիլի 15 -ի մեր եզրակացությունում արտահայտել ենք չձևափոխված աուդիտորական եզրակացություն:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներում (ՖՀՄՍ): Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում Բանկի աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ ղեկավարության պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտորական ստուգում անցած ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որտեղ ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են միևնույն ձևով, ինչպես և աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների, որոնք չեն ներառվում այս ամփոփ ֆինանսական հաշվետվություններում:

Grant Thornton

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, հիմնվելով մեր կողմից իրականացրած ընթացակարգերի վրա, արտահայտել եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ աուդիտի միջազգային ստանդարտ 810 *«Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության ձևակերպմամբ կիրառվող առաջադրանքներ»* ստանդարտին համապատասխան:

Եզրակացություն

Մեր կարծիքով 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա «Հայբիզնեսբանկ» փակ բաժնետիրական ընկերության աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից քաղված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են այդ ֆինանսական հաշվետվություններին:

Այլ հանգամանքներ

«Հայբիզնեսբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2012 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որը 2013 թվականի ապրիլի 29-ին տրված եզրակացությամբ արտահայտել է չձևափոխված աուդիտորական կարծիք հանգամանքների լուսաբանումով:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն/բաժնետեր

Արմեն Վանյան
Աուդիտոր

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
15 ապրիլի 2014թ.
ք. Երևան

«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» 00040569